Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-980-24.05.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-122 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում.

1) հանել «ինքնավար էներգաարտադրող» սահմանումը.

2) «վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ՝» սահմանումը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ՝ էլեկտրական եւ (կամ) ջերմային էներգիայի արտադրության համար կիրառելի ոչ հանածո վերականգնվող աղբյուրներ (հողմային, արեւային, ջրային, երկրաջերմային, կենսազանգվածի, կենսագազի եւ այլն).»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետից հանել «վերականգնող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող» բառերը:

Հոդված 3. Օրենքի հավելվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 1-ից: